# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

1. Վ. ԲԵԼՔ և Կ. ԼԷՄԱՆ, Տեղեկագիր հետազօտական ուղեւորութեան մը ընդ Հայս։ Հանուած ի թերթէն Sitzungsberichte der Königlich Preussischen Akademie der Wissenschaften zu Berlin, հինգ էջ (116—120), պրակ Ե, 9 փետրուար 1899, Բեռլին։

2. ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Սեբէոսի պատմութիւնը և Մ. Խորենացւոյ Մատենագրական ուսումնասիրութիւն։ Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկ., № 156։ Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռօտ. 1899։ Փոքր 8° էջք 118 + Ը։ Գինն է՝ 40 կոպ։

3. Հ. ԵՍԱՅԻ ՏԱՅԵՑԻ, Անկանոն գիրք Նոր կտակարանաց, (որ ի Թանգարան Հայկական հին և նոր նախնեաց յ հաւաքածոյին Բ հատորը կը կազմէ)։ Վենետիկ, 1898։ Մեծ 8° էջք 492 + ԺԶ։

4. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ, Դատ մը Ֆրիդրիխ Միւլլերի գերեզմանին վրայ։ Հանուած ի Բազմավէպէ հոր. ԾԶ։ Վենետիկ, 1898։ 4° էջք 16։

---

1. Երկու նշանաւոր հնագէտներու գիտական ուղեւորութեան համառօտ մէկ տեղեկագիրն է, ներկայացուած Բեռլինի Թագաւորական Բրուսիական Ակադեմիային։ Ասոր ամբողջական թարգմանութիւնը պիտի տանք Բանասէրի յառաջիկայ Գրքով։

2 և 3. Ասոնց մասին պիտի խօսինք գալ անգամ։

4. Այս հրատարակութեան վրայ չպիտի խօսինք ծանօթ պատճառաւ, միայն հարկ կը համարինք այս առթիւ հրատարակել թարգմանութիւնը Ֆրանսերէն նամակին, զոր Տիկին Ֆրիդրիխ Միւլլեր ղրկելու պատիւ ըրած է Գրքոյկիս հեղինակին։